ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 Մայիսի 2021թվականի N 14-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17 -րդ հոդվածի պահանջներով Նոր Հաճն համայնքի ավագանին՝ ***որոշում է***.

Հաստատել համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 13 -ի թիվ 4 արտահերթ նիստի օրակարգը:

1 Նոր Հաճն համայնքի սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին:

2. Նոր Հաճն համայնքի Իսահակյան փողոցի թիվ 5/51 հասցեի 49,0 քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայանություն տալու մասին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՊՐԵՍՅԱՆ ԿԱՄՈ

ԱՐՄԵՆԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ԽԱՌԱՏՅԱՆ ՄԱՐՏԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԲԱԲԻԿ

ՄԻՐԶՈՅԱՆ ԿԱՌԼԵՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

Համայնքի ղեկավար՝ **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 Մայիսի 2021 թվականի N 15-Ա

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9 կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով և <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> օրենքի 13-րդ հոդվածով Նոր Հաճն համայնքի ավագանին՝ ***որոշում է***.

1.Հաստատել Նոր Հաճն համայնքի սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն կից հավելվածների:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՊՐԵՍՅԱՆ ԿԱՄՈ

ԱՐՄԵՆԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ԽԱՌԱՏՅԱՆ ՄԱՐՏԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԲԱԲԻԿ

ՄԻՐԶՈՅԱՆ ԿԱՌԼԵՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

Համայնքի ղեկավար՝ ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 Մայիսի 2021 թվականի N 16-Ա

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 5/51 ՀԱՍՑԵԻ 49.0 ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Նոր Հաճն համայնքի ղեկավարին է դիմել Գևորգ Սամվելի Բեսալյանը, Նոր Հաճն համայնքի Իսահակյան փողոցի թիվ 5/52 հասցեի, իր սեփականությունը հանդիսացող 56,0 քմ կառուցապատված հողամասին կից գտնվող /Իսահակյան փողոց թիվ 5/51 հողամաս հասցեի / 49.0 քմ մակերեսով հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով: 49.0 քմ հողամասը չի համարվում Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները: Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով,Նոր Հաճն համայնքի ավագանին՝ ***որոշում է***.

1. Տալ համաձայնություն Նոր Հաճն համայնքի 07-006-0022-0130 ծածկագրի տակ գտնվող Իսահակյան փողոց թիվ 5/51 հասցեի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով, 334881 /երեք հարյուր երեսունչորս հազար ութ հարյուր ութսունմեկ/ դրամ արժեքով, Գևորգ Սամվելի Բեսալյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՊՐԵՍՅԱՆ ԿԱՄՈ

ԱՐՄԵՆԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ԽԱՌԱՏՅԱՆ ՄԱՐՏԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԲԱԲԻԿ

ՄԻՐԶՈՅԱՆ ԿԱՌԼԵՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

Համայնքի ղեկավար՝ **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Հավելված 1
Նոր Հաճն համայնքի ավագանու
2021 թվականի մայիսի 13-ի
N 15-Ա որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՆՈՐ ՀԱՃՆ 2021 ԹՎԱԿԱՆ

- Սույն կարգը կարգավորում է Նոր Հաճն համայնքի տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքներն ու պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը՝ չվճարելու, պարտավորությունները չկատարելու համար:

- Աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Թափոնների մասին>> և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքներով և իրավական այլ ակտերով:

- <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> ՀՀ օրենքից բխող սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1. ***Աղբահանություն՝*** համայնքի տարածքում գոյացող աղբի հավաքում, փոխադրում աղբավայր.
2. ***Աղբ՝*** կենցաղային աղբ, ոչ կենցաղային աղբ (արտադրական, շինարարական), խոշոր եզրաչափերի աղբ.
3. ***Սանիտարական մաքրում՝*** քաղաքային համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, այգիների, պուրակների, հրապարակների, բակերի, մայթերի, անցումների և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրում՝ աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից, ճանապարհի երթևեկելի մասերի և մայթերի ջրում, լվացում, մաքրում ձյունից և սառույցից: Համայնքի ընդհանուր օգտագործման համար համապատասխան վայրերում տեղադրված աղբամանների սպասարկում:
4. ***Օպերատոր՝*** քաղաքային համայնքի աղբահանություն և (կամ) սանիտարական մաքրման ծառայություններ մատուցող կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր:

- Աղբահանության և սանիտարական մաքրման հիմնական նպատակներն ու գործընթացի կազմակերպման սկզբունքներն են՝

1. Մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցումը և չեզոքացումը.
2. Բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովումը.
3. Համայնքի տարածքների աղտոտման, աղբակույտերի առաջացման անթույլատրելիությունը և տարածքների մաքրումը աղբից.
4. Աղբահանության և սանիտարական մաքրման պարտադիր և պարբերաբար իրականացումը սույն կարգով նախատեսված սանիտարական մաքրման սխեմային համապատասխան.
5. Աղբահանության վճարովի լինելը.

6.Օգտագործման ենթակա թափոնների տեսակավորման, օգտագործման ու վերամշակման համար պայմանների ստեղծումը և աղբավայրերում տեղադրվող թափոնների ծավալների նվազեցումը.

7.Աղբահանության և սանիտարական մաքրման վերաբերյալ տեղեկատվության մատչելիության և հանրային իրազեկության ապահովումը քաղաքային համայնքի կողմից.

8. Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների մեքենայացումը.
9.Քաղաքային համայնքին հարևան համայնքների հետ համագործակցությունը.

10.Համայնքային բյուջեի հաշվին սանիտարական մաքրման աշխատանքների իրականացումը:

- Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների ֆինանսավորումը.

Համայնքի տարածքում իրականացված աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ֆինանսավորվում են համայնքի բյուջեից՝ առանձին ծախսային ծրագրով (ծրագրերով) կամ արտաբյուջետային հաշվից:

- Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնողը.

1.Համայնքի ավագանու որոշմամբ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները քաղաքային համայնքի բյուջեի միջոցների հաշվին իրականացվում է <<Նոր Հաճնի համայնքապետարանի կոմունալ տնտեսություն>> հիմնարկի կողմից:

2. <<Նոր Հաճնի համայնքապետարանի կոմունալ տնտեսություն>> հիմնարկը կարող է իրականացնել խոշոր եզրաչափերի աղբի հավաքումը և փոխադրումը քաղաքային համայնքի ավագանու հաստատած դրույքաչափերին համապատասխան:

3.Իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, քաղաքային համայնքի ավագանու սահմանած պահանջներին համապատասխան, կարող է իրականացնել շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքումը և փոխադրումը՝ աղբի հավաքման և փոխադրման թույլտվության հիման վրա:

4.Աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ կարող են տրամադրվել նաև շինարարական և խոշոր եզրաչափի աղբի աղբահանության վճար վճարողներին՝ աղբն ինքնուրույն հավաքելու և փոխադրելու համար:

5.Աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունը տրամադրում է քաղաքային համայնքի ղեկավարը համայնքի ավագանու հաստատած պայմաններով և կարգով:

6.Աղբի հավաքման և փոխադրման թույլտվության տրամադրման պայմանները և կարգը պետք է ուղղված լինեն սույն կարգով նախատեսված նպատակներին և սկզբունքներին, ինչպես նաև սույն կարգով նախատեսված ժամանակացույցին համապատասխան աղբահանության իրականացման ապահովմանը:

7.Աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունները տրամադրվում են կոնկրետ աղբահանության վճար վճարողների քանակի համար՝ վճարովի հիմունքներով: Թույլտվությունների համար վճարների դրույքաչափերը սահմանում է ավագանին, որոնք, սակայն, չեն կարող գերազանցել համապատասխան աղբահանության վճար վճարողի կողմից սույն կարգով նախատեսված հաշվարկվելիք դրույքաչափերի 20 տոկոսը:

- Աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպմանը ներկայացվող պահանջները.

Աղբահանությունը և սանիտարական մաքրումը պարտադիր և պարբերաբար իրականացվող աշխատանքներն են՝ օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ:

- Աղբի հավաքմանը և պահմանը ներկայացվող պահանջները.

1.Կենցաղային աղբը հավաքվում և (կամ) պահվում է քաղաքային համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների՝ այդ նպատակով հատուկ սահմանված կամ նախատեսված տեղերում և քաղաքային համայնքի կամ օպերատորի տրամադրած տարողություններում՝ աղբամաններում կամ

կոնտեյներներում, աղբախցերում՝ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ:

2. Համայնքի ընդհանուր օգտագործման տարածքներում առաջացող աղբի համար քաղաքային համայնքը կամ օպերատորը տեղադրում է աղբամաններ կամ կոնտեյներներ՝ սանիտարահիգիենիկ կանոններին և նորմերին, ինչպես նաև սանիտարական սխեմային համապատասխան:

3.Ոչ կենցաղային աղբը, ինչպես նաև խոշոր եզրաչափերով աղբը հավաքվում և պահվում է աղբահանության վճար վճարողների ձեռք բերած կամ համայնքի, կամ օպերատորի, կամ սույն կարգով նախատեսված անձանց տրամադրած և դրանց համար նախատեսված աղբամաններում կամ կոնտեյներներում, որոնք տեղադրվում են աղբահանության վճար վճարողների համապատասխան տարածքներում: Քաղաքային համայնքը կամ օպերապորը աղբամանները կամ կոնտեյներները աղբահանության համար վճարողների պահանջով կարող է տրամադրել վարձակալության հիմունքներով:

4. Ըստ սույն կարգի, աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցը, փոխադրմանը ներկայացվող աղբամանների կամ կոնտեյներների տրամադրման վայրերը, դրանց տեսակները և քանակը քաղաքապետի ներկայացմամբ պետք է հաստատի քաղաքային համայնքի ավագանին՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնները և նորմերի պահանջները: Աղբը պետք է փոխադրվի մինչև կոնտեյներների ամբողջությամբ լցվելը:
5.Արգելվում է աղբը պահել և թափել դրա համար չսահմանված կամ չնախատեսված վայրերում:

6. Աղբի հեռացման ժամային գրաֆիկը ըստ փողոցների և տարածքների կազմվում է <<Նոր Հաճնի համայնքապետարանի կոմունալ տնտեսություն>> հիմնարկի կողմից համաձայնեցվում է համայնքի ղեկավարի և իրազեկվում է բնակչությանը:

- Աղբի փոխադրմանը ներկայացվող պահանջները.
Աղբի փոխադրման իրականացումը պետք է կազմակերպվի՝ նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի աղտոտումը:

- Աղբի տեղադրմանը ներկայացվող պահանջները.

1. Աղբը տեղադրվում է օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագրված աղբավայրերում կամ ենթարկվում է վերամշակման:
2.Աղբավայրերում աղբի տեղադրումն իրականացվում է աղբավայրերի շահագործման և սանիտարահիգիենիկ կանոնների պահանջների պահպանմամբ:
3.Արգելվում է աղբի տեղադրումը դրա համար չնախատեսված վայրերում:

-Քաղաքի սանիտարական մաքրման սխեմային ներկայացվող պահանջները.

1.Քաղաքի սանիտարական մաքրման սխեման պարունակում է հետևյալ հիմնական տարրերը՝ քաղաքային համայնքում առաջացող աղբի ծավալների մոտավոր հաշվարկը, քաղաքի սանիտարական մաքրման աշխատանքների ծավալները, աղբի հավաքման, պահպանման, փոխադրման, տեսակավորման և վնասազերծման ձևերն ու մեթոդները, անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները, սանիտարական մաքրման ենթակա հուշարձանների տեղակայումը:

2.Սանիտարական մաքրման սխեման հաստատում է Նոր Հաճն համայնքի ավագանին:

Հավելված 2
Նոր Հաճն համայնքի ավագանու
2021 թվականի մայիսի 13-ի
N 15-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ

Նոր Հաճն համայնքում սանիտարական մաքրումը ներառում է ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, այգիների, պուրակների, հրապարակների, բակերի, մայթերի, կամուրջների, սիզամարգերի և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումը աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից:

Փողոցների երթևեկելի մասերի ջրով լվացում, փողոցների, կամուրջների և մայթերի՝ ձյունից և սառույցից մաքրում: Սանիտարական մաքրման աշխատանքները, կապված տարվա եղանակների հետ, իրենց բնույթով և խնդիրներով տարբեր են:

Ամառային մաքրում. Այն իր մեջ ընդգրկում է մաքրման ձեռքի աշխատանքի և մեքենայացված մաքրման տեխնոլոգիաները: Հավաքարարների միջոցով իրականացվող մաքրման ձեռքի աշխատանքի հիմնական նպատակն է սահմանված նորմերին համապատասխան ապահովելու ընդհանուր օգտագործման տարածքներից աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից մաքրումը և փողոցների երթևեկելի մասերի ջրում-լվացումը՝ բարելավելու միկրոկլիման և նվազեցնել օդի աղտոտվածության աստիճանը: Հավաքարարները մաքրվող տարածքներից աղբը հավաքում են փողոցներում տեղադրված աղբարկղերում, կամ այդ նպատակի համար հատկացված տեղերում՝ կույտերով: Սիզամարգերից մաքրումը կատարվում է ձեռքով մաքրման միջոցով: Մեքենայացված մաքրման խնդիրն է ապահովել փողոցներից աղբի հեռացումը, փոսերի մաքրումը և փողոցների երթևեկելի մասի լվացումը (ջրումը) հատուկ մեքենայի միջոցով:

Ձմեռային մաքրում. Այն իր մեջ ընդգրկում է, փողոցների, մայթերի, հրապարակների մաքրումը ձյունից, մայթերի սառցակալման դեմ աշխատանքները, սառցակույտերի մաքրումը և հեռացումը: Բացի ձյունից, ձմեռային մաքրման դեպքում ապահովում է փողոցների, մայթերի ու հրապարակների մաքրումը (աղբի մաքրումը և հավաքումը) ձնատեղումների միջև ընկած ժամանակաշրջանում:

ա) Համայնքում առաջացող ամսական աղբի ծավալների մոտավոր հաշվարկով կազմում է 37 տոննա

բ) համայնքում սանիտարական մաքրում իրականացվում է քաղաքի 12 փողոցներում և 3 թաղամասերում՝ ընդգրկելով ողջ քաղաքի տարածքը

գ) աղբահանությունը իրականացվում է ամենօրյա գրաֆիկով, որը աղբատար մեքենաների միջոցով տեղափոխվում է մոտ 8 կմ հեռավորության վրա գտնվող տիպային աղբավայր

դ) աղբի հավաքման աշխատանքները իրականացվում է 3- աղբատար (մեքենաները աղբը տեղափոխում են ծածկոցով ծածկված) և 1-ջրցան մեքենաների միջոցով

h/h	Բակերի, պուրակների ասֆալտապատ տարածքների հասցեն	Ընդհանուր մակերեսը (մ 2	I	II	III	IV	V	VI	VII
1	Տոռոզյան	11400	✓		✓		✓		
2	Չարենց	14960		✓		✓		✓	
3	Թումանյան	6400	✓		✓		✓		
4	Ազատամարտիկներ	7800		✓		✓		✓	
5	Իսահակյան	7700	✓		✓		✓		
6	Շահումյան	5610		✓		✓		✓	
7	Ա.Հարությունյան	3600	✓		✓		✓		
8	Գայի	3300		✓		✓		✓	
9	Սպորտային	3500	✓		✓		✓		
10	Աջափնյա	2400		✓		✓		✓	
11	Զ.Անդրանիկի	3500	✓		✓		✓		
12	«Հաճըն» հուշարձան Թումանյան փողոցին հարող տարածք	900	✓	✓	✓	✓	✓	✓	
13	Շասս-Սուղ-Ղոն	3200	✓		✓		✓		
	Ընդամենը	74270							

ՀԱՇՎԱՐԿ

Նոր Հաճն համայնքում սանիտարական մաքրման ենթակա ընդհանուր օգտագործման տարածքների և առաջացող աղբի ծավալների

Համայնքի ընդհանուր 74270 քառ.մետր ենթակա է ձեռքով և մեքենայական մաքրման

Ընդհանուր օգտագործման տարածքներից առաջացող աղբի ծավալները կազմում են՝

ա/ կատարելագործված ծածկույթ ունեցող մայթերի, փողոցների ու հրապարակների մեկ քառ. մետր մակերեսից տարեկան գոյանում է 15կգ ավելվածք,

բ/ սիզամարգերից գոյանում է 5կգ:

Քաղաքի մաքրվող մակերեսից կգոյանա՝

ա/ 66270x 0.015 = 994,05 : 12 x 9 = 745,56 տոննա աղբ,

գ/ 8000 x 0.005 = 40 : 12 x 9 = 30,1 տոննա աղբ,

Ընդամենը՝ 775,66 տոննա աղբ: